ՀՈՒՇԱԹԵՐԹ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՐ

(Նախատեսված է քվեարկությունն առանց ընտրողների ստուգման սարքերի շարունակելու համար։)

Նկատի ունեցե՛ք

Քվեարկությունն առանց ընտրողների ստուգման սարքերի շարունակելու ժամանակ, հանձնաժողովի նախագահը գրանցում իրականացնողին փոխանցում է սեղանի համար հատկացված ընտրացուցակը (լուսանկարներով), գրանցողներից մեկին՝ նաև հատուկ ցուցակը (այդպիսինի առկայության դեպքում)։ Գրանցում իրականացնողների սեղանի մոտ կփակցվի գրանցում իրականացնողների սեղանի վրա տեղադրված ցուցակներին համապատասխան ընտրողների ազգանունների այբբենական հաջորդականությունը և ընտրողների համարների հաջորդականությունը։

Ընտրողին գրանցելու նպատակով.

- ընտրողին խնդրե՛ք ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը։
- ստուգե՛ք, թե արդյոք ընտրողն ընդգրկված է ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակի մեջ և համեմատե՛ք ընտրողի անձնական համարը ընտրողների ցուցակում առկա համարի հետ,
- ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը։

Ուշադրությո՛ւն

✔ Եթե ընտրողի դեմքը և ներկայացված անձը հաստատող փաստաթղթում/ընտրողների ցուցակում առկա լուսանկարը միմյանց անհամապատասխան համարեք, տվյալ անհամապատասխանությունը հաստատելու համար դիմե՛ք հանձնաժողովի նախագահին և սպասե՛ք նրա ցուցումներին։ Եթե հանձնաժողովի նախագահը չի հաստատի անհամապատասխանությունը, իրավունք ունեք քվեարկության օրվա գործավարության մատյանում գրել ձեր առանձնահատուկ կարծիքը, ինչը հանձնաժողովի քարտուղարի հետ հաստատում եք ստորագրությամբ։ Անկախ ներկայացված անձը հաստատող փաստաթղթում/ընտրողների ցուցակում առկա լուսանկարի հետ ընտրողի դեմքը անհամապատասխան համարելուն, ընտրողը մասնակցում է քվեարկությանը։

✔ Եթե քվեարկության ներկայացած ընտրողն ընդգրկված է շրջիկ քվեատուփի ցուցակի կամ այլ ընտրատեղամասի համար հատկացված ցուցակի մեջ, նրան կարգելվի ընտրատեղամասում մասնակցել քվեարկության։

✔ Ընտրողը, որին միասնական ցուցակում շնորհվել է «Գտնվում է արտասահմանում» կարգավիճակ կամ «հյուպատոսական հաշվառման է» քվեարկությանը մասնակցում է ընդհանուր կարգով։

- Ընտրողի տվյալների համապատասխանությունը հաստատելու դեպքում ընտրողին արե՛ք նշմարում նրա աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգին, եթե տվյալ գործողությունն անհնար է կատարել, ապա՝ աջ ձեռքի այլ մատների վրա, իսկ եթե դա ևս անհնար է՝ նույն կարգով ձախ ձեռքի վրա։

Նկատի՛ ունեցեք

✔ Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չպետք է տրամադրեք քվեաթերթիկ:

✔ Ընտրողը, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), չի անցնում նշմարման ընթացակարգ:

- Ստորագրե՛ք ընտրողների միասնական ցուցակի համապատասխան սյունակում և ցուցո՛ւմ տվեք ընտրողին նույնպես ստորագրել տվյալ սյունակում:

Նկատի՛ ունեցեք

✔ Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տաք ստորագրել նույն սյունակում: Ինչպես նաև, նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրեք (ընտրողների միասնական ցուցակում ընտրողի համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ):

✔ Եթե քվեարկությանը մասնակցում է ընտրող, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), ընտրողների միասնական ցուցակի «ընտրողի ստորագրություն» սյունակում պետք է անեք գրառում «ֆիզիկական վիճակ» և տվյալ գրառումը վավերացնեք ստորագրությամբ:

- Ընտրողին փոխանցե՛ք քվեաթերթիկը, քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրար և բացատրե՛ք դրա օգտագործման և քվեաթերթիկի լրացման կարգը:

Ուշադրությո՛ւն

Ընտրողին նույն քվեաթերթիկի վրա նշիչի միջոցով գունավորե՛լ տվեք հատուկ առանձնացված տեղում առկա փորձնական շրջանը:



- Ընտրողին ցուցո՛ւմ տվեք, որ մտնի գաղտնի քվեախցիկ:

Քվեարկությունն առանց ընտրողների ստուգման սարքերի շարունակելու ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով ընտրողների գրանցում իրականացնողները ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին հաշվում են ընտրողների ցուցակներում ստորագրությունների թիվը: